

Կանոնակարգ

ՎՊՄԻ-ի «Դասախոսը ուսանողների աչքերով»

արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման

1. Ընդհանուր դրույթներ:

- 1.1. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման (այսուհետև՝ ուսանողական հարցման) կանոնակարգը սահմանում է ՎՊՄԻ-ի Ուսանողության կողմից ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման, հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգը:
- 1.2. Ուսանողական հարցումն անցկացվում է ՀՀ «Կրթության մասին» օրենքի 28 հոդվ. 4-րդ կետի պահանջների հիման վրա և համարվում է ՎՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:
- 1.3. Ուսանողական հարցման կանոնակարգը հաստատում և դրա մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարում է ինստիտուտի գիտական խորհուրդը:

2. Ուսանողական հարցման անցկացումը:

- 2.1. Ուսանողական հարցումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակ (հոկտեմբեր-նոյեմբեր, մարտ-ապրիլ, հեռակա ուսուցման համակարգում՝ հունիս ամիսներին) այն ֆակուլտետում, որտեղ դասավանդել է դասախոսը: Ավարտական կուրսերում 2-րդ կիսամյակի վերաբերյալ հարցումն իրականացվում է քննաչրջանի ավարտից հետո՝ մինչև պետական քննությունների սկիզբը:
- 2.2. Հնգամյա ժամկետով ընտրված դասախոսի համար անցկացվում է առնվազն 3 հարցում:
- 2.3. Հրավիրված դասախոսների համար հարցում անցկացվում է առնվազն մեկ տարվա աշխատանքայի փորձ ունենալու առկայության դեպքում:
- 2.4. Ուսանողական հարցումն կազմակերպվում է ՎՊՄԻ-ի «Դասախոսն ուսանողների աչքերով» սոցիոլոգիական հարցումն անցկացնող հանձնախմբի

/կազմը վավերացվում է ռեկտորի հրամանով/ և ուսումնական վարչության կողմից՝ դեկանատների օժանդակությամբ:

2.5. Ուսանողական հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով (հավելված 1)՝ 5 միավորանոց սանդղակով:

Ուսանողական հարցումն անանուն է:

2.6. Ուսանողական հարցումն անցկացվում է դասերի հաշվին, ոչ պակաս քան 15 հոգուց բաղկացած խմբերում: Ձևաթերթերը ստորագրվում են հարցումն անցկացնողների կողմից:

2.7. «Դասախոսը ուսանողների աչքերով» սոցիոլոգիական հարցումն անցկացնող անդամին միանում է նաև տվյալ դասաժամի դասախոսը:

2.8. Հարցման ձևաթերթերի բաժանումը, հավաքումը և ուսվարչությանը հանձնումը վավերացվում է ստորագրություններով (ձևաթերթ 2):

3. Ուսանողական հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

3.1. Ուսանողական հարցման արդյունքները մշակվում են ուսումնական վարչության կողմից:

3.2. Գնահատման հարցաթերթերը պահվում են 5 տարի՝ ուսումնական վարչությունում:

4. Ուսանողական հարցման արդյունքների օգտագործումը

4.1. Ուսանողական հարցման արդյունքների ամփոփաթերթը ուսումնական վարչությունը ներկայացնում է համապատասխան ֆակուլտետին և ամբիոնին:

4.2. Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոնում, այնուհետև ֆակուլտետի խորհրդի նիստում: Անհրաժեշտության դեպքում քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և խորհուրդներ՝ ուղղված տվյալ դասախոսի դասավանդման որակի բարելավմանը:

Ուսանողների գրավոր կարծիքները քննարկվում են ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստում:

4.3. Դասախոսն իրավունք ունի ուսվարչությունում ժանոթանալու հարցման՝ իրեն վերաբերող կարծիքների՝ (ամփոփաթերթ):

4.4. Մրցույթների ժամանակ հարցման արդյունքները տրամադրվում են մրցութային հանձնաժողովին:

4.5. Ուսանողական հարցման անհատական արդյունքները հրապարակվում են միայն տվյալ ֆակուլտետում:

4.6. Ուսանողական հարցման արդյունքներն օգտագործվում են հավակնորդի՝ պաշտոնում ընտրվելու և առաջխաղացման գործընթացում: